

Մամլո հաղորդագրություն

2021 թ. հոկտեմբերի 13, 14-15-ը Երևանում կայանալիք հայ-ֆրանսիական առաջին գիտաբժշկական համաժողովի

Հայաստանին և Ֆրանսիային կապող պատմական համերաշխությանը հավատարիմ՝ Ֆրանսիայի երեք հանրային հիվանդանոց միացել են իրենց հայ գործընկերներին՝ նրանց հետ օգնելու Արցախում վերջին հակամարտությունից տուժածներին:

Այս համագործակցության մասնակիցները կհանդիպեն 2021 թվականի հոկտեմբերի 13, 14 և 15-ին, Երևանի պետական բժշկական համալսարանում՝ Արցախի հակամարտության արդյունքում վիրավորների խնամքին նվիրված առաջին ֆրանս-հայկական գիտաբժշկական համաժողովի շրջանակներում:

Համաժողովի նպատակն է ֆրանսիացի և հայ մասնագետներին կիսվել իրենց փորձով, սովորել վիրավորների հետ կատարված առաքելությունների դասերը և սահմանել Ֆրանսիայի և Հայաստանի միջև առողջապահության ոլորտում տևական համագործակցության հեռանկարները:

Ֆրանս-հայկական գիտաբժշկական համաժողովը կազմակերպվում է Փարիզի համալսարանական հիվանդանոցների /Assistance publique - Hôpitaux de Paris (AP -HP) կողմից, Լիոնի համալսարանական հիվանդանոցների, Լիոնի հոսպիտալի Վինսատիե կենտրոնի մասնակցությամբ և գտնվում է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության բարձր հովանավորության ներքո, այն կազմակերպվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Հայ-ֆրանսիական առաջին գիտաբժշկական համաժողովի բացմանը ներկա կգտնվեն Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը, Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Անն Լույոն, ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, ինչպես նաև Փարիզի համալսարանական հիվանդանոցների գլխավոր տնօրեն Մարտին Հիրսչը և Լիոնի քաղաքացիական հիվանդանոցային համակարգի գլխավոր քարտուղարը:

Մասնակիցների գրանցումը սահմանափակ է և պետք է կատարվի հետևյալ կայքում.

<https://forms.gle/o3Gg63v1dZtr7R2Q8>

Համաժողովի համակարգողներ /Ֆրանսիա/.

Ֆլորանս Վեբեր (AP-HP) - Լիոն Խաչատրյան (AP -HP)

Համաժողովի համակարգողներ /Հայաստան/.

Կոնստանտին Ենոկյան-Երվանդ Սահակյան